Ապաստանի տրամադրման հաստատման ամփոփ ներկայացում

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ. Ապաստան փնտրողը ժամանում է Միացյալ Նահանգներ
Ապաստան փնտրողը որպես կանոն իրավունք ունի դիմել ապաստանի համար ՆԱՕ-ի « 208(a)-ի հիման վրա, եթե նա 1) ժամանում է կամ ֆիզիկապես գտնվում է ԱՄՆ-ում, եւ 2) ներկայացնում է փաստաթղթերը ԱՄՆ ժամանելու մեկ տարվա ընթացքում կամ ապացուցում, որ մեկ տարվա ընթացքում փաստաթղթերը ներկայացնելու պահանջի հարցում բացառությունը կիրառելի է:

ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ. Ապաստան փնտրողը դիմում է ապաստանի համար
Ապաստան փնտրողը ներկայացնում է I-589 Ձեւը՝ Ապաստան ստանալու եւ վտարումը հետաձգելու դիմում, համապատասխան Սպասարկման կենտրոն:

ՔԱՅԼ ԵՐՐՈՐԴ. Դիմորդից վերցվում են մատնահետքեր, եւ անցկացվում են կենսագրական ստուգումներ անվտանգության նկատառումներով
13 տարեկան եւ ավելի բարձր տարիքի դիմորդները Սպասարկման կենտրոնից ստանում են ծանուցում այցելելու Դիմումների աջակցման կենտրոն կամ լիազորված Օրենքի կատարում ապահովող պաշտոնական գործակալություն, որտեղ կվերցվեն իրենց մատնահետքերը:

ՔԱՅԼ ՉՈՐՐՈՐԴ. Դիմորդը ստանում է հարցազրույցի ծանուցում
Դեպքերի մեծամասնությունում դիմորդը ստանում է ծանուցում, որտեղ նշված է ապաստան ստանալու հարցազրույցի ամսաթիվը, վայրը եւ ժամանակը դիմորդի կողմից ամբողջական I-589 ձեւը ներկայացնելուց հետո՝ 21 օրվա ընթացքում:

ՔԱՅԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Դիմորդի հետ անցկացվում է հարցազրույց
Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցն անց է կացնում հարցազրույց դիմորդի հետ ապաստանի հարցերով զբաղվող ութ գրասենյակներից մեկում, որոնք գտնվում Առլինգթոնում՝ Վանքուվեր, Չիկագոյում՝ Իլլինոյս, Հյուստոնում՝ Տեխաս, Լոս Անջելեսում՝ Կալիֆորնիա, Մայամիում՝ Ֆլորիդա, Նյուառկում (Լինհորստ)՝ Նյու Ջերսի, Նյու Յորքում (Ռոուզդեյլ)՝ Նյու Յորք, եւ Սան Ֆրանցիսկոյում՝ Կալիֆորնիա, կամ, եթե դիմորդը շատ հեռու է բնակվում ապաստանի հարցերով զբաղվող գրասենյակից, ապա՝ տարածքային գրասենյակում:

Դեպքերի մեծամասնությունում դիմորդի հետ անց է կացվում հարցազրույց փաստաթղթերը ներկայացնելուց հետո 43 օրվա ընթացքում, սակայն այն անձանց համար, որոնք հարցազրույց են անցնում տարածքային գրասենյակում, ժամանակի սահմանները կարող են ավելի երկար լինեն, որովհետեւ Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցները պետք է կազմակերպեն իրենց ուղեւորությունն այդ գրասենյակներ:

ՔԱՅԼ ՎԵՑԵՐՈՐԴ. Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը պայմանների բավարարման որոշում է կայացնում եւ Ապաստանի հարցերով գրասենյակի վերահսկող աշխատակիցը վերանայում է որոշումը
Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը որոշում է, արդյոք դիմորդը համապատասխանում է ՆԱՕ-ի « « 101(a)(42)(A)-ի մեջ փախստականի սահմանմանը, եւ արդյո՞ք կիրառելի է ըստ ՆԱՕ-ի « 208 (b)(2)-ի ապաստանի իրավունք տրամադրելու իրավական արգելքը: Ապաստանի հարցերով գրասենյակի վերահսկող աշխատակիցը վերանայում է ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցի եզրակացությունը որոշելու, թե արդյո՞ք այն չի հակասում օրենքին:

ՔԱՅԼ ՅՈԹԵՐՈՐԴ. Դիմորդը ստանում է որոշումը
Դեպքերի մեծամասնությունում դիմորդը վերադառնում է ապաստանի հարցերով գրասենյակ որոշումը վերցնելու հարցազրույցն անցնելուց 2 շաբաթ անց: Դիմորդը, որպես կանոն, ստանում է որոշումը փաստաթղթերը հանձնելուց 60 օր անց:

Այնուամենայնիվ, գործի վերաբերյալ որոշումները կարող են հետաձգվել անավարտ անվտանգության կամ կենսագրական ստուգումների պատճառով: Գործընթացի ավելի երկար ժամանակ նաեւ կարող է պահանջվել այն դիմորդի համար, ով ներկայումս օրինական կարգավիճակում է, հարցազրույց է անցել տարածքային գրասենյակում, կամ ում գործը վերանայվում է Ապաստանի հարցերով գլխավոր գրասենյակի անձնակազմի կողմից: Այս իրավիճակներում որոշումը սովորաբար փոստով ուղարկվում է դիմորդին:

Լրացուցիչ աղբյուրներ

Դուք իրավունք ունեք ապահովել Ձեր սեփական իրավական ներկայացումը ապաստան ստանալու հարցազրույցին առանձ որեւէ վճարի Միայցյալ Նահանգների կառավարությանը: ¸ուք կարող եք ունենալ հասարակական (անվճար կամ իջեցված վճարով) իրավաբանների կամ հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների ցանկ, որոնք կարող են օգտակար լինել Ձեզ ³ջակցելու համար՝

- Ուսումնասիրելով մեր կայքը, որը տրամադրում է տեղեկություն՝ անճար իրավական խորհրդի վերաբերյալ:
- Զանգահարելով Ձեւերի հարցման գծի հեռախոսահամարով՝ 1-800-870-3676:
- Այցելելով Ներգաղթման վերահսկման հարցերով Արդարադատության Նախարարության գործադիր գրասենյակի կայքը՝ http://www.usdoj.gov/eoir:
- Կապնվելով ապաստանի հարցերով գրասենյակի կամ Ձեր տան մոտ գտնվող տարածքային գրասենյակի հետ:

ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչները (UNHCR) կարող են աջակցել Ձեզ գտնել այն անձանց, որոնք կօգնեն Ձեզ լրացնել I-589 Ձեւը: UNHCR-ի հետ կապնվելու համար զանգահարե՛ք՝ (202) 296-5191 կամ այցելե՛ք՝ http://www.unhcr.org:

Այս հոդվածում քննարկված թեմաների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել՝

http://www.uscis.gov/asylum

կամ զանգահարել՝ 1-800-375-5283:

U.S. Citizenship and Immigration Services

ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ • ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ • ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳԱՂԹՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ (USCIS) ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՇՐԱԳԻՐ

Ապաստան ստանալու ապագա դիմորդների տեղեկատվական ուղեցույց

U.S. Citizenship and Immigration Services

www.uscis.gov/asylum

Ապաստան ստանալու ընթացակարգի ընդհանուր գաղափարը

Ամեն տարի տարբեր մարդիկ գալիս են Միացյալ Նահանգներ փնտրելով պաշտպանություն այն պատճառով, որ նրանք ենթարկվում են հալածանքների կամ վախ ունեն, որ հալածանքների կենթարկվեն իրենց ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի հիման վրա: Անձանց, ովքեր համապատասխանում են ապաստան ստանալու պայմաններին, կարող է թույլատրվել մնալ Միացյալ Նահանգներում:

Ի՞նչ է ապաստանը:
Ապաստանը հալածանքների ենթարկման վախ ներշնչող երկիր տեղափոխվելուց պաշտպանության մի ձև է, որը թույլ է տալիս պայմաններին բավարարող փախստականին մնալ ԱՄՆ-ում եւ ինչ-որ ժամանակ անց դառնալ օրինական մշտական բնակիչ:

Ո՞վ կարող է դիմել ապաստանի համար:
Ներկայումս ԱՄՆ-ում ապրող ցանկացած ազգության անձինք կամ նրանք, ովքեր մուտք են փնտրում մուտքի որեւէ վայրում (օդանավակայանում, նավակայանում կամ ապօրինի ներգաղթման միջոցով):

Ե՞րբ ես պետք է դիմեմ ապաստանի համար:
Որպես կանոն ապաստան ստանալու համար դուք պետք է դիմեք ԱՄՆ Ձեր վերջին ժամանումից՝ մեկ տարի ժամանակահատվածում: Հնարավոր են բացառություններ, ինչպես օրինակ՝ (1) փոփոխված հանգամանքեր Ձեր հայրենի երկրում, որոնք կազդեն Ձեր՝ պայմանների բավարարման վրա կամ (2) արտակարգ հանգամանքներ, որոնք կապված են Ձեր լրացման ուշացման հետ:

Արդյո՞ք կարող եմ ես դիմել ապաստան ստանալու համար, եթե ես անօրինական եմ այստեղ գտնվում:
Այո: Դուք կարող եք դիմել անկախ Ձեր ներգաղթման կարգավիճակից, քանի որ Ձեր դիմումը ներկայացնում եք Ձեր վերջին ժամանումից մեկ տարի ժամանակահատվածում կամ ապացուցում եք, որ բավարարում եք այս կանոնի բացառության պայմանին:

Արդյո՞ք կարող եմ դիմել, եթե դատապարտված եմ եղել ինչ-որ հանցանքի համար:
Այո: Սակայն կախված հանցանքից Ձեզ կարող են զրկել ապաստան ստանալու իրավունքից:

Արդո՞ք ինձ կարող են զրկել ապաստանի համար դիմելու կամ ստանալու իրավունքից:
Ձեզ կարող են թույլ չտալ դիմել ապաստան ստանալու համար, եթե նախկինում Դուք դիմել եք ապաստան ստանալու համար եւ մերժվել եք ներգաղթման դատավորի կամ Ներգաղթման բողոքարկումների հանձնաժողովի կողմից, եթե չեք դիմել վերջին ժամանումից մեկ տարի ժամանակահատվածում, կամ եթե Ձեզ կարող են տեղափոխել ապահով երրորդ երկիր երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրի համաձայն: Ձեզ կարող են զրկել ապաստան ստանալու իրավունքից որոշակի հանցավոր գործունեության, անվտանգությանն առնչվող հիմունքների պատճառով կամ, եթե Դուք ընդգրկված եք եղել ուրիշներին հալածանքների ենթարկելու մեջ, կամ արդեն հիմնավոր բնակություն եք հաստատել մեկ այլ երկրում: Որոշակի բացառություններ կարող են կիրառվել: Եթե Ձեզ չի թույլատրվում դիմել ապաստան ստանալու, այնուամենայնիվ, Ձեզ, միեւնույն է, կարող է ընձեռվել վտարումը հետաձգելու իրավունք՝ պաշտպանության մեկ այլ՝ ավելի սահմանափակ ձեւ, որ կարող է տրամադրվել վտարման գործընթացում:

Ապաստան ստանալու գործընթացի մասին հարցեր

Ինչպե՞ս ես պետք է դիմեմ ապաստան ստանալու համար:
Ապաստանի դիմելու համար Դուք պետք է լրացնեք I-589 Ձեւը՝ *Ապաստան ստանալու եւ վտարումը հետաձգելու դիմում*, եւ ուշադիր հետեւվեք հրահանգներին: Ձեւերը կարող եք գտնել http://www.uscis.gov/forms կայքում, ինչպես նաեւ՝ զանգահարելով ձեւերի հարցման գծով՝ 1-800-870-3676:

Որքա՞ն է պետք վճարել ապաստանի դիմելու համար:
Ապաստանի դիմելու համար ոչ մի վճար չկա:

Արդյո՞ք կարող եմ ես ընդգրկել ամուսնուս եւ երեխաներիս իմ այս գործում:
Ձեր ամուսինը եւ երեխաները, որոնք գտնվում են Միացյալ Նահանգներում, կարող են ընդգրկվել Ձեր դիմումի մեջ փաստաթղթերը ներկայացնելու պահին կամ ցանկացած ժամանակ մինչեւ Ձեր գործի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը: Երեխան պետք է 21 տարեկանից փոքր եւ ամուրի լինի, որպեսզի Ձեր դիմումի մեջ ընդգրկվի որպես խնամքի տակ գտնվող անձ: Ապաստան ստանալու համար Ձեր հարցազրույցին Դուք պետք է Ձեզ հետ բերեք խնամքի տակ գտնվող այս անձանց:

Արդյո՞ք ես ենթակա եմ անվտանգության եւ կենսագրական տվյալների ստուգմների, եթե ես դիմեմ ապաստանի համար:
Այո: Ապաստանի համար դիմող յուրաքանչյուր անհատ ենթակա է կենսագրական տվյալների եւ անվտանգության ստուգմների: Այդ ստուգումների արդյունքներից կախված՝ հնարավոր է, որ Դուք չբավարարեք ապաստան ստանալու իրավունքի պայմաններին:

Կվերցնե՞ն արդյոք իմ մատնահետքերը, եթե ես դիմեմ ապաստանի համար:
Այո: Ձեր՝ ապաստան ստանալու համար դիմումը ներկայացնելուց հետո Դուք փոստով կստանաք ծանուցում, որտեղ նշված կլինի Դիմումների աջակցման որեւէ կենտրոնում Ձեր մատնահետքերը վերցնելու ժամանակը, ամսաթիվը եւ վայրը:

Ես կարո՞ղ եմ աշխատել ապաստան ստանալու համար դիմելուց հետո:
Դուք չեք կարող դիմել աշխատանքի թույլատվության համար ապաստան ստանալու դիմումի հետ միաժամանակ: Այնուամենայնիվ, Դուք կարող եք դիմել աշխատանքի թույլատվության համար, եթե Ձեր՝ ապաստան ստանալու ամբողջական դիմումը ներկայցնելուց հետո անցել է 150 օր, բացառությամբ Ձեր կողմից ցանկացած ուշացման, եւ Ձեր դիմումի վերաբերյալ որոշում չի կայացվել: Բացի այդ, եթե Դուք ստանաք ապաստանի իրավունք, ապա Ձեզ կթույլատրվի աշխատանքի անցնել սկսած այն պահից, երբ Ձեր ապաստանի գործը հաստատվի:

Ապաստան ստանալու համար դիմումը ներկայացնելուց հետո ես կարո՞ղ եմ ճանապարհորդել ՀՄՆ-ից դուրս:
Եթե Դուք պետք է ճանապարհորդեք ԱՄՆ-ից դուրս մինչեւ Ձեր ապաստան ստանալու գործի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, ապա *մինչեւ* ԱՄՆ-ից մեկնելը Դուք նախապես թույլատվություն պետք է ստանաք, որը նաեւ կոչվում է Նախապես արձակում, որպեսզի ետ վերադառնաք: Եթե Դուք չկարողացաք ստանալ Նախապես արձակումը, հպա USCIS-ը կհամարի, որ Դուք հրաժարվել եք Ձեր դիմումից եւ Ձեզ կարող են մերժել կրկին ընդունել ԱՄՆ: Բացի այդ, եթե Դուք Նախնական արձակում ստանաք եւ վերադառնաք հալածանքների ենթարկման վախ ներշնչող երկիր, ապա USCIS-ը կարող է որոշել, որ Դուք հրաժարվել եք Ձեր՝ ապաստան ստանալու դիմումից քանի դեռ Դուք չեք տրամադրել Ձեր վերադարձի վերաբերյալ համոզիչ պատճառներ:

Կարո՞ղ է որեւէ մեկն ինձ օգնել իմ՝ ապաստան ստանալու հարցազրույցի գործում:
Ձեր ապաստան ստանալու հարցազրույցին Դուք կարող եք ներկայանալ Ձեր անձնական փաստաբանի կամ օրինական ներկայացուցչի հետ առանձ որեւէ վճարի ԱՄՆ-ի կառավարությանը:

Ինչպե՞ս է անցկացվելու հարցազրույցն ինձ հետ, եթե ես չեմ խոսում անգլերեն:
Հարցազրույցը Ձեզ հետ կանցկացվի թարգմանչի օգնությամբ: USCIS-ը թարգմանիչներ չի տրամադրում: Դուք պետք է ներկայանաք հարցազրույցին Ձեր անձնական թարգմանչի հետ: Եթե Ձեր թարգմանիչը բավարար կերպով չի խոսում անգլերեն, ապա Հարցազրույցը Ձեզ հետ կարող է հետաձգվել, որպեսզի Դուք կարողանաք գտնել ավելի բանիմաց թարգմանչի:

Ի՞նչ է տեղի ունենալու իմ ապաստան ստանալու հարցազրույցի ժամանակ:
Դուք գալու եք ապաստանի հարցերով գրասենյակ, որտեղ ունենալու եք ոչ մրցակցային հարցազրույց գրասենյակի աշխատակցի հետ, որը կստուգի Ձեր ինքնությունը եւ կտա Ձեր հիմնային կենսագրական հարցեր, ինչպես նաեւ կհարցնի ապաստանի համար դիմելու պատճառների մասին: Ցանկացած բան, որ Դուք ասեք հարցազրույցի ընթացքում, կմնա գաղտնի: Շատ կարեւոր է, որ Դուք Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցին պատմեք Ձեր փորձառությունների մասին որքան հնարավոր է մանրամասնորեն, որպեսզի աշխատակիցը կարողանա որոշել, թե արդո՞ք Դուք համարվում եք փախստական: Ձեր գործի վերաբերյալ որոշումը չի կայացվի հարցազրույցի հետ միեւնույն օրը:

Ինչպե՞ս է Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը որոշում, թե ունեմ ես արդյոք ապաստանի իրավունք:
Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակիցը կորոշի Ձեր իրավասության հարցը գնահատելով՝ արդյո՞ք Դուք համապատասխանում եք փախստականի սահմանմանը եւ զրկված չեք ապաստան ստանալու իրավունքից՝ Ձեր դիմումում եւ Ապաստանի հարցերով գրասենյակի աշխատակցի հետ հարցազրույցի ընթացքում տրամադրված տեղեկության հիման վրա, ինչպես նաեւ այլ տեղեկությունների, որոնք կարող են հասանելի լինեն աշխատակցին:

Ի՞նչ է տեղի ունենալու, եթե որոշում կայացվի, որ ես չեմ բավարարում ապաստան ստանալու պայմաններին:
Եթե Ձեզ ապաստան ստանալու իրավունքից զրկված ճանաչեն, սակայն Դուք ունեք վավեր ներգաղթման կարգավիճակ կամ համապատասխանում եք ԱՄՆ-ում մնալու պայմաններին (ժամանակավոր պաշտպանված կարգավիճակի կամ, որոշ դեպքերում, **ԱՄՆ ժամանելու եւ դուրս մեկնելու իրավունքի հիման վրա**) Դուք կստանաք Ձեր դեպքի մերժման մտադրության մասին ծանուցում, որը բացահայտում է պատճառները, թե ինչու Դուք ապաստան ստանալու իրավունք չունեք: Դուք հնարավորություն կունենաք հերքելու այս պատճառները եւ տրամադրելու լրացուցիչ ապացույցներ պաշտպանելու Ձեր գործը: Եթե Դուք չունեք վավեր ներգաղթման կարգավիճակ կամ չեք համապատասխանում ԱՄՆ-ում մնալու պայմաններին, ապա Դուք կհայտնվեք հեռացման գործընթացում եւ Ձեր գործը կփոխանցվի ներգաղթման հարցերով դատավորին, որը կրկին կգնահատի Ձեր՝ ապաստան ստանալու մասին դիմումը:

Ինչպե՞ս ես կարող եմ տեղեկանալ իմ գործի կարգավիճակի մասին:
Խնդրում ենք կապնվել USCIS-ի Ապաստան ստանալու հարցերով գրասենյակի հետ, որն անցկացրել է կամ կանցկացնի Ձեր՝ ապաստան ստանալու հարցազրույցը:

Որտե՞ղ ես կարող եմ գտնել օրենքները:
Ապաստանի համար իրավական հիմքերը ներարկայացված են Ներգաղթման եւ Ազգության մասին օրենքի (ՆԱՕ) 208 հոդվածում: Դաշնային օրենքները, որոնք բացահայտում են ապաստան ստանալու համար պահանջների բավարարման պայմանները եւ ընթացակարգերը, կարող եք գտնել Դաշնային օրենքների օրենսգրքում (CFR)[8] 8 CFR § 208-ում:

U.S. Citizenship and Immigration Services